



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԱԳՐՈՆՈՄԻԱ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

**Հարգելի՛ ուսուցիչ**

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:  
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի  
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան  
անդրադառնալ ավելի ուշ:

**Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության  
համար:**

**1** Նշվածներից ո՞րն է ջերմաստան օդի ջերմային ռեժիմի կարգավորման առանձնահատկությունը: (1 միավոր)

- 1) գազափոխանակությունը
- 2) խողովակների ստուգումը
- 3) օդափոխությունը
- 4) պտղի քանակի կարգավորումը

**2** Պտղատուների տնկանյութի ստացման համար նախատեսված տնկարանը բաղկացած է (1 միավոր)

- 1) մեկ բաժնից՝ սորտային այգի իր պատվաստակալներով և պատվաստացուներով
- 2) մեկ բաժնից՝ անգարային տիպի փակ գրունտով
- 3) հետևյալ երկու բաժիններից՝ սերմնաբուսակների և պատվաստվածների
- 4) հետևյալ երեք բաժիններից՝ բազմացման, ձևավորման և մայրուտների

**3** Տրվածներից ո՞րն է էտի ձև (ոչ եղանակ): (1 միավոր)

- 1) կունդը
- 2) բնատումը
- 3) նոսրացումը
- 4) ձևավորումը

**4** Ո՞րը այգու տեղաձևման համակարգ կամ պտղատուների տնկման եղանակ չէ: (1 միավոր)

- 1) զիգագաձև
- 2) քառակուսի
- 3) ուղղանկյուն-քառանկյուն
- 4) շախմատաձև

**5** Ո՞րն է խաղողի *Vitis vinifera sativa* L. ենթատեսակին պատկանող սորտերի շիվերի վրա բեղիկների առաջացման օրինաչափությունը: (1 միավոր)

- 1) մեկ հանգույց բեղիկով, մյուսը՝ առանց բեղիկի
- 2) մեկ հանգույց բեղիկով, մյուս երկուսը՝ առանց բեղիկի
- 3) երկու հանգույց բեղիկով, հաջորդը՝ առանց բեղիկի
- 4) երկու հանգույց բեղիկով, հաջորդ երկուսը՝ առանց բեղիկի

**6** Ինչպե՞ս է արտահայտվում խաղողի վազի դրական գեոտրոպիզմը: (1 միավոր)

- 1) Վազի վերգետնյա բունը հաստանում է:
- 2) Արմատները առաջացնում են կողքային խիտ ճյուղավորումներ:
- 3) Վազի ստորգետնյա բունը ուղղահայաց դիրք է ունենում:
- 4) Արմատները ուղղաձիգ խորանում են:

**7** Խաղողի վազի բազմացման ո՞ր եղանակը չէ՞ն կիրառում արտադրական պայմաններում սորտը պահպանելու համար: (1 միավոր)

- 1) պատվաստներով
- 2) ցողունային կտրոններով
- 3) սերմերով
- 4) անդալիսներով

**8** Ի՞նչ է իրենից ներկայացնում խաղողի վազի կտրոնների կիլչեցումը: (1 միավոր)

- 1) կալյուսագոյացում՝ կտրոնի հիմքում առաջացող նախաարմատային հյուսվածքի գոյացում
- 2) կտրոնի հիմքում արմատների առաջացման և աչքերի բացման միջև տևողության կրճատում
- 3) բողբոջների ուռչում և շիվերի աճի արագացում
- 4) անդալիս՝ առանց մայր վազից անջատելու տնկանյութի ստացում

**9** Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված վնասակար օրգանիզմների դեմ ինտեգրացված պայքարի իրականացման ընդհանուր սկզբունքները: (1 միավոր)

- 1) ագրոտեխնիկական, կենսաբանական և քիմիական պայքարի եղանակների հաջորդաբար կիրառում
- 2) կանխարգելիչ և կարանտին միջոցառումների իրականացում
- 3) պայքարի եղանակների, միջոցների և գործիքների համատեղում
- 4) ֆիզիկական և մեխանիկական գործողությունների կատարում

**10** Բոլոր բուսակեր կաթնասուն վնասակար օրգանիզմներին բնորոշ անատոմիական առանձնահատկությունը որոշվում է՝ (1 միավոր)

- 1) գանգատուփի կառուցվածով
- 2) ծնոտի կառուցվածքով
- 3) ամբողջ կմախքի կառուցվածքով
- 4) ոտքերի կառուցվածքով

11) **Տրվածներից ո՞րն է հողային կադաստրի գործառույթի բաղկացուցիչ մաս: (1 միավոր)**

- 1) հողերի կարգաբանումը
- 2) հողերի բռնիտումը
- 3) հողերի առքը և վաճառքը
- 4) հողային անալիզների կատարումը

12) **Հողի էրոզիա նշանակում է՝ (1 միավոր)**

- 1) հողագոյացում կամ պրոֆիլի ձևավորում
- 2) քարքարոտվածություն կամ ստրուկտուրագոյացում
- 3) հողածածկի քայքայում կամ հողատարում
- 4) հողային ռեժիմների ձևավորում

13) **Տրվածներից ո՞րն է պարտադիր, որպեսզի արտադրանքը մակնշվի որպես օրգանական, բիո կամ էկո: (1 միավոր)**

- 1) Պետք է ստացված լինի միայն օրգանական պատրաստուկների կիրառման շնորհիվ:
- 2) Մննդի անվտանգության տեսչական մարմնի կողմից գրանցում պիտի ունենա:
- 3) Պետք է վերամշակված լինի հատուկ տեխնոլոգիաներով:
- 4) Պետք է սերտիֆիկացված լինի լիազոր մարմնի կողմից:

14) **Ո՞ր շարքն է ներկայացնում գիտական երկրագործության բոլոր օրենքները: (1 միավոր)**

- 1) հողային հատկությունների և ռեժիմների, հողի մշակման համակարգերի, ցանքաշրջանառությունների
- 2) բույսի կյանքի գործոնների համատեղ ներգործության, անփոխարինելիության և համարժեքության, նվազագույնի, չափավորի և առավելագույնի, վերադարձի
- 3) բույսերի աճի, զարգացման, բերքատվության և հետբերքահավաքյա պայմանների ապահովման ու կարգավորման
- 4) անհերթափոխ ցանքերի, մոլախոտային բուսականության դեմ պայքարի, հերբիցիդների դասակարգման, հողերի հիմնական և մակերեսային մշակման

**15** Ի՞նչ են կոչվում մոլախոտերի դեմ քիմիական պայքարի համար օգտագործվող նյութերը: (1 միավոր)

- 1) ինսեկտիցիդներ
- 2) հերբիցիդներ
- 3) ակարիցիդներ
- 4) ֆունգիցիդներ

**16** Տրվածներից ո՞րը մոլախոտերի դասակարգման սկզբունքներից չէ: (1 միավոր)

- 1) սննդառության ձևը
- 2) կանքի տևողությունը
- 3) վնասակարության աստիճանը
- 4) բազմացման եղանակները

**17** Կերը համարվում է համակցված, եթե՝ (1 միավոր)

- 1) լիառացիոն է
- 2) մանրացված է
- 3) տեսակավորված է
- 4) պահածոյացված է

**18** Ո՞րը կերերին ներկայացվող պահանջներից չէ: (1 միավոր)

- 1) սննդարարությունը
- 2) հյութալիությունը
- 3) մարսելիությունը
- 4) ուտելիությունը

**19** Նշվածներից ո՞րը ուղղակի պարարտանյութ չէ: (1 միավոր)

- 1) նատրիումական սելիտրան
- 2) գիպսը
- 3) ամոֆոսը
- 4) կալիումի քլորիդը

**20** Ի՞նչ տարածությամբ պետք է մեկուսացված լինի տաքդեղի սերմնադաշտը: (1 միավոր)

- 1) 400-500մ
- 2) 1000-1500մ
- 3) 2000-2500մ
- 4) 3000-3500մ

**21** Նշվածներից ո՞րն է բույսերի համար բաց դաշտում լույսի կարգավորման միջոցառում: (1 միավոր)

- 1) կանոնավոր կատարված վարը
- 2) ճիշտ ընտրված սնման մակերեսը
- 3) բերքահավաքի համապատասխան ժամկետը
- 4) միջշարքերի կանոնավոր փխրեցումը

**22** Տրվածներից ո՞րը կապ ունի բանջարային մշակաբույսերի մեջ ֆոսֆորի ավելցուկի հետ: (1 միավոր)

- 1) առաջանում է կալցիումի, երկաթի պակաս
- 2) հին տերևները դեղնում են
- 3) առաջանում է մագնեզիումի, կալիումի պակաս
- 4) տերևածայրերը դարչնագույն են դառնում

**23** Տրվածներից ո՞րն է բավարարում ջերմատների համար հատկացված հողամասի պահանջներին: (1 միավոր)

- 1) Հարավից պետք է լինի քամիներից պաշտպանող անտառաշերտ:
- 2) Ջերմատները պետք է ճանապարհ ունենան դեպի տնտեսության մյուս արտադրական տեղամասեր:
- 3) Ռելիեֆը պետք է լինի ալիքաձև:
- 4) Գրունտային ջրերը լինեն հողի մակերեսին մոտիկ:

**24** Ո՞ր միացությունների քանակական պարունակությունով է պայմանավորված սննդամթերքի էներգետիկ հատկությունը: (1 միավոր)

- 1) վիտամինների և բազմաֆենոլային միացությունների
- 2) սպիտակուցների, ածխաջրերի և ճարպերի
- 3) հանքային նյութերի և ֆերմենտների
- 4) բուրավետ և ֆենոլային նյութերի

**25** Նշվածներից ո՞ր ապրանքային ենթախմբում է ընդգրկված բադրիջանը: (1 միավոր)

- 1) սալաթա-սպանախային
- 2) դդմային
- 3) տոմատային
- 4) դեսերտային

**26** Մթերքում որակի նշված ցուցանիշներից որո՞նք կարելի է որոշել միայն օրգանալեպտիկ ճանապարհով: (1 միավոր)

- 1) մեղրի մեջ շաքարի տոկոսային պարունակությունը
- 2) սուրճի բույրը
- 3) բանջարեղենում վիտամինների խումբը
- 4) դրամաբանջարեղենում մեջ ջրի տոկոսային պարունակությունը

**27** 34%-ոց ամոնիումի նիտրատ պարարտանյութի 50կգ-ոց պարկում քանի կիլոգրամ է ազոտ նյութը: (1 միավոր)

- 1) 35կգ
- 2) 12,5կգ
- 3) 17կգ
- 4) 1,47կգ

**28** Նշվածներից ո՞րը ցրտադիմացկուն բանջարային բույս չէ: (1միավոր)

- 1) կաղամբ
- 2) գազար
- 3) ճակնդեղ
- 4) ամսաբողկ

**29** Տրված պնդումներից ո՞րը ճիշտ չէ: (1միավոր)

- 1) Ցեղայինը քաղհանի տեսակ է՝ հացահատիկային մշակաբույսերի սերմնադաշտում:
- 2) Հազարը միամյա մշակաբույս է:
- 3) Ծաղկակոկոնների առաջացման փուլը ընդգրկված է վեգետատիվ աճի շրջանի մեջ:
- 4) Օղի բարձր ջերմաստիճանի և ցածր հարաբերական խոնավության պայմաններում տաքդեղի ծաղիկները թափվում են:

**30** Ի՞նչ նպատակով են ջերմատները ըստ երկարության կառուցում հյուսիսից դեպի հարավ: ( 1միավոր )

- 1) խոնավության պահպանման
- 2) օդափոխության պահպանման
- 3) ջերմության, լուսավորության ճիշտ կարգավորման
- 4) պարարտացման փոքր չափաբաժին օգտագործելու

**31** **Տրվածներից 3-ը հյուսիսի կերեր են: Նշել դրանց համարները: (3 միավոր )**

1. խոտայուրը
2. սիլոսը
3. հատիկակերը
4. արմատապտուղները
5. համակցված կերերը
6. արոտային կանաչը
7. մարգագաետնային խոտը

**32** **Տրվածներից 3-ը միջբուսային և միջշարային տարածքների խիստ նորմավորվածության եղանակներ են: Նշել դրանց համարները: (3 միավոր )**

1. քառակուսի սածիլում
2. բնային ցանք
3. ուղղանկյուն-բնային սածիլում
4. լայնաշարք սածիլում
5. քառակուսի-բնային սածիլում
6. ժապավենաձև սածիլում
7. սովորական շարային ցանք

**33** **Տրված պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Ծաղկակաղամբը ենթարկվում է ընտրովի բերքահավաքի:
2. Ոռոգման չափաքանակը ջրի այն քանակն է, երբ տալիս ենք յուրաքանչյուր ջրման ժամանակ:
3. Հողի նախացանքային մշակաման աշխատանքներից են վար, քաղհան, բուկլից:
4. Մոխիրը թթու հողերի համար լավագույն պարարտանյութ է
5. Սորտային հսկողություն, որը իրականացվում է սորտային ցանքերի դաշտային ապրոբացիայի ճանապարհով:
6. Ծովաբողկը երկամյա մշակաբույս է:
7. Գազարի և ճակնդեղի սերմնաբուծությունը ընթանում է չորս վեգետացիոն տարում:



34

**Տրվածներից 3-ը միանգամյա բերքահավաքի բանջարաբույսեր են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. պոմիդորը
2. դդմիկը
3. թրթնջուկը
4. ուշահաս կաղամբը
5. ծաղկակաղամբը
6. գլուխ սոխը
7. սխտորը

35

**Տրված պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Այլատեսակայինը քաղհանի տեսակ է՝ հացահատիկային մշակաբույսերի սերմնադաշտում:
2. Բանջարային մշակաբույսերում կալցիումի պակասը առաջացնում է հետծաղկումային փտում:
3. Սխտորին պետք տալ թարմ գոմաղբ՝ շուտ հասունանալու համար:
4. Թրթնջուկը և խավրժիլը երկամյա բանջարաբույսեր են:
5. Վարունգի իգական ծաղիկների գերակշռող մասը գտնվում է գլխավոր ցողունի վրա:
6. Ձմերուկը մինչև ծաղկելը պետք է քիչ ջրել:
7. Ջերմատան օժանդակ կառույցները պետք է տեղադրել հարավային մասում:

36

**Տրված շարքերից 3-ում բոլոր նշվածները հողի պրոֆիլի (կտրվածքի) մորֆոլոգիական (արտաքին կամ ձևաբանական) հատկանիշներն են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. գույնը և գենետիկական հորիզոնները
2. հզորությունը և խոնավունակությունը
3. ջերմահաղորդականությունը և նորագոյացումները
4. հանքաբանական կազմը և էրոզացվածությունը
5. մեխանիկական կազմը և ստրուկտուրան
6. ներփակումները և կառուցվածքը
7. քարքարոտությունը և աղակալվածությունը

**37** **Հետևյալ պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Հողի մշակման համակարգերը լինում են գարնանացան և աշնանացան մշակաբույսերի համար:
2. Ցանքաշրջանառությունը մշակաբույսերի և ցելերի գիտականորեն հիմնավորված հաջորդականությունն է ժամանակի և տարածության մեջ:
3. Հակաէրոզիոն վարը էրոզացված հողերի մշակման եղանակ է:
4. Մոլախոտերի կենսաբանական խմբերը առանձնացվում են՝ ըստ դրանց տարածվածության աստիճանների:
5. ՀՀ բնահողային գոտիներում ձևավորվել են 14 հողատիպեր՝ իրենց 27 ենթատիպերով:
6. Մեկ վեգետացիոն շրջանում բազմամյա և միամյա մշակաբույսերի հաջորդաբար մշակությունը միևնույն դաշտում կոչվում է մոնոկուլտուրա:
7. Ուղղաձիգ գոտիականություն նշանակում է տեղանքի հեռավորությունը հասարակածից:

**38** **Տրվածներից 3-ում արտացոլված է օրգանական գյուղատնտեսության իրավական դաշտը: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. ՀՀ Արտահանման իրավական կարգավորումներում
2. ՀՀ Մաքսային օրենսգրքում
3. ՀՀ Օրգանական գյուղատնտեսության մասին օրենքում
4. ՀՀ Սահմանադրությունում
5. ՀՀ Ներմուծման իրավական կարգավորումներում
6. ՀՀ Հարկային օրենսգրքում
7. ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունում

39

**Տրված շարքերից 3-ում ներկայացված են օրգանական գյուղատնտեսության հիմնական սկզբունքները: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. կենսաբազմազանության պահպանման համար նպաստավոր միջավայրի ձևավորումը, էկոանվտանգ և ռեսուրսապահպան տեխնոլոգիաների ներդրումը
2. պարարտանյութերի կիրառման արդյունավետության բարձրացումը և վնասակար օրգանիզմների վերացումը
3. բնական ճանապարհով հողի ֆիզիկական, քիմիական և կենսաբանական կազմի բարելավումը, լուկալ կամ ներտնտեսային փակ շղթայի ձևավորումը
4. ինտենսիվ համակարգերի օգտագործումը գյուղատնտեսության մեջ՝ պարենային անվտանգության ապահովության համար
5. գյուղատնտեսական արտադրանքի արժեքի ավելացումը՝ ֆերմերային տնտեսությունների բարձր եկամտաբերություն ապահովելու համար
6. մշակաբույսերի բերքատվության բարձրացումը
7. առավել լավ հարմարված բույսերի տեսակների և սորտերի ընտրությունը, մթերքի վերամշակման ընթացքում դրանց կենսաբանական լիարժեքության պահպանումը

40

**Տրվածներից 3-ը մշակաբույսերի ոչ վնասակար կենդանի օրգանիզմների գենետիկական կատեգորիաներ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Հողվածոտանիներ՝ տզեր և միջատներ
2. Կլոր որդեր՝ նեմատոդներ
3. Հողվածոտանիներ՝ յոթկետանի գատիկ և ոսկեաչիկ
4. Փափկամորթեր՝ խխունջներ և կողիւնջներ
5. Կլոր որդեր՝ անձրևորդեր և կալիֆորնիական որդեր
6. Միկրոօրգանիզմներ՝ սնկեր, բակտերիաներ և վիրուսներ
7. Ցածրակարգ օրգանիզմներ՝ մամուռներ և քարաքոսեր